Արձանագրություն N 2

«ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/15» ծածկագրով «Երևանի N 1 տուն-ինտերնատ» պետական ոչ առևտրային կազմակերպության տարածքում անկողնային խնամք ստացող անձանց սպասարկման նպատակով կառուցված նոր մասնաշենքի հարակից տարածքների բարեկարգման և կանաչապատման, ինժեներական համակարգերի կառուցման, պարսպի վերականգնման, շենքային տարածքների հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 05.09.2017թ.
ժամը 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի անդամներ՝ Ս.Մաթևոսյան / գնահատող /
Ա.Քոչարյան /գնահատող/
Ա.Հովսեփյան / բացող /
Ն.Մանուկյան / բացող /

Հանձնաժողովի քարտուղար՝ Ն.Հարությունյան

Բացակայում էր
հանձնաժողովի նախագահ՝ Մ.Սարիբեկյան

1. Տեղեկություններ <<ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/15>> ծածկագրով գնման ընթացակարգին ներկայացված հայտերի բացման մասին

(Ս.Մաթևոսյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ

ա) գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2017 թվականի օգոստոսի 29-ին, ժամը 11:30-ին.

բ) գնման առարկայի նախահաշվային գինը կազմում է 4 613 500 (չորս միլիոն վեց հարյուր տասներեք հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ.

գ) գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

ՀՀ դրամ

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Հասցե	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի գումարը)	ԱԱՀ	Առաջարկված ընդհանուր գինը
1	<<Հազարաշեն>> ՍՊԸ	ք.Երևան, Կոմիտաս պող. 54	744 000	-	744 000
2	<<Էմ Ջի դիզայն>> ՍՊԸ	ք. Երևան, Բաղյան 1-ին նրբ. 6/6	1 680 000	-	1 680 000
3	<<Սարգիս և Մարիաննա>> ՍՊԸ	ք. Եղվարդ, Նար Դոսի փողոց, 28ա	1 855 000	-	1 855 000
4	<<ՆՅՈՒ ԻՆԴԱՍԹՐԻԶ>> ՍՊԸ	ք. Երևան, Նոր Նորք Բագրևանդի փ. 1/3, բն. 39	1 940 000	-	1 940 000
5	<<Գազշին ՄՁ>> ՍՊԸ	ք.Երևան, Արին-բերդի 5/1	3 425 000	685 000	4 110 000

դ) ներկայացված հայտերն ուսումնասիրելու նպատակով հանձնաժողովը կասեցրել է նիստը և որոշել հաջորդ նիստը հրավիրել 2017 թվականի օգոստոսի 31-ին, ժամը 16:00-ին:

ե) հայտերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ <<Հազարաշեն>> ՍՊԸ-ի կողմից իրական շահառուների մասին հավելվածի <<Անունը Ազգանունը Հայրանունը>> սյան մեջ բացակայում են շահառուների հայրանունները:

Հիմք ընդունելով <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ին N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջները գնահատող հանձաժողովը որոշել է կասեցնել նիստը, ծանուցել <<Հազարաշեն>> ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել նշված անհամապատասխանությունը: Հաջորդ նիստը հրավիրել 2017 թվականի սեպտեմբերի 5-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

2. Տեղեկություններ հայտերում առկա անհամապատասխանությունների վերաբերյալ

(Ս.Մաթևոսյան)

2.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերի ուսումնասիրության արդյունքում գնահատող հանձնաժողովը արձանագրեց՝

ա) <<Հազարաշեն>> ՍՊԸ-ի կողմից շտկվել և մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացվել է արձանագրված անհամապատասխանությունը.

բ) <<ՆՅՈՒ ԻՆԴԱՍԹՐԻԶ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժել, քանի որ գնային առաջարկի հավելվածի <<Աշխատանքի անվանումը>> սյան մեջ <<Երևանի N 1 տուն-ինտերնատ>> պետական ոչ առևտրային կազմակերպության տարածքում անկողնային խնամք ստացող անձանց սպասարկման նպատակով կառուցված նոր մասնաշենքի հարակից տարածքների բարեկարգման և կանաչապատման, ինժեներական համակարգերի կառուցման, պարսպի վերականգնման, շենքային տարածքների հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքներ>>-ի փոխարեն գրված է <<Երևանի N 1 տուն-ինտերնատ>> պետական ոչ առևտրային կազմակերպության տարածքում անկողնային խնամք ստացող անձանց սպասարկման նպատակով կառուցված նոր մասնաշենքի հարակից տարածքների բարեկարգման և կանաչապատման, ինժեներական համակարգերի կառուցման, պարսպի վերականգնման, շենքային տարածքների հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննություն>>.

գ) <<Գազշին ՄՁ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժել, քանի որ հայտով ներկայացված բոլոր փաստաթղթերում բացակայում է էլեկտրոնային թվային ստորագրությունը, ինչպես նաև <<Քաղաքաշինության բնագավառում քաղաքաշինական փաստաթղթերի մշակում և փորձաքննություն>> լիցենզիայի կապի ներդիրը:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

3. Տեղեկություններ <<ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/15>> ծածկագրով գնման ընթացակարգի առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների մասին

(Ս.Մաթևոսյան)

3.1 Հիմք ընդունելով ընթացակարգի մասնակիցների կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը՝ գնահատող հանձնաժողովի կողմից էլեկտրոնային համակարգի միջոցով հայտերը գնահատվել են հետևյալ հերթականությամբ և հետևյալ կերպ.

Զբաղեցրաց տեղը	Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
1	<<Հազարաշեն>> ՍՊԸ	բավարար
2	<<Էմ Ջի դիզայն>> ՍՊԸ	բավարար
3	<<Սարգիս և Մարիաննա>> ՍՊԸ	բավարար
4	<<ՆՅՈՒ ԻՆԴԱՍԹՐԻԶ>> ՍՊԸ	անբավարար
5	<<Գազշին ՄՁ>> ՍՊԸ	անբավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4 դեմ - 0:

4. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու մասին

(Ս.Մաթևոսյան)

4.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերը՝ հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած <<Հազարաշեն>> ՍՊԸ-ի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

5. <<ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/15>> ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ս.Մաթևոսյան)

5.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2017 թվականի սեպտեմբերի 12-ին ժամը 12:00-ին ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3, IV հարկ, գնումների կազմակերպման բաժին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահող՝ _____ Ս.Մաթևոսյան

Անդամ՝ _____ Ա.Քոչարյան

_____ Ա.Հովսեփյան

_____ Ն.Մանուկյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ _____ Ն.Հարությունյան